«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ տնօրեն
_____ Վ. Գ. Սահակյան
« 23 » փետրվարի 2015 թ.

ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի
կրտսեր գիտաշխատողի պաշտոնի անձնագիր

Տվյալ պաշտոնի անձնագիրը հաստատվել է ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ Գիտական խորհրդի 19.02.2015թ. նիստում՝ համապատասխան ՀՀ Աշխատանքային Օրենսգրքի, ՀՀ ԳԱԱ դրույթների և ՀՀ-ում աշխատանքային հարաբերությունները կարգավորող այլ կանոնակարգերի:

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Կրտսեր գիտաշխատողի պաշտոնում նշանակվում է.
- գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականը,
- մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող մասնագետը:

1.2. Կրտսեր գիտաշխատողի պաշտոնի նշանակումը և դրանից ազատումը իրականացվում է ինստիտուտի տնօրենի հրամանով:

1.3. Կրտսեր գիտաշխատողի պետք է իմանա՝
- Անցկացվող հետազոտությունների և մշակումների նպատակները և խնդիրները;
- հետազոտությունների և մշակումների կազմակերպման ժամանակակից մեթոդները և միջոցները, տեղեկատվության ընդհանրացում և մշակում, այդ թվում էլեկտրոնային հաշվողական տեխնիկայի կիրառմամբ;
- աշխատանքի կազմակերպման հիմունքները, աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:

1.4. Կրտսեր գիտաշխատողը ուղղակիորեն ենթարկվում է այն ստորաբաժանման ղեկավարին, որի կազմի մեջ ընդգրկված է հրամանով:

2. Աշխատանքային պարտականություններ

Կրտսեր գիտական աշխատողը

2.1.Մասնակցում է գիտական թեմայի առանձին մասերի շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր)՝ պատասխանատու կատարողի ղեկավարությամբ,

2.2. Կատարում է տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ուսումնասիրություն:

2.3. Իրականացնում է սեփական գիտատեխնիկական արդյունքների տարեկան հրապարակում տեղական և միջազգային գիտական

ամսագրերում:

2.4. Մասնակցում է ինստիտուտի ընդհանուր գիտական սեմինարին:

3. Իրավունքները

Կրտսեր գիտական աշխատողը իրավունք ունի՝

3.1. Ծանոթանալ ինստիտուտի ղեկավարության որոշումների նախագծերին, որոնք վերաբերվում են իր գործունեությանը:

3.2. Իր իրավասության տակ գտնվող հարցերով ղեկավարությանը ներկայացնել առաջարկություններ ինստիտուտի գործունեության և աշխատանքային մեթոդների բարելավման ուղղությամբ, դիտողություններ՝ ինստիտուտի աշխատակիցների գործունեության վերաբերյալ, առաջարկություններ ինստիտուտի գործունեության մեջ առկա թերությունների վերացման վերաբերյալ:

3.3. Անձամբ կամ ինստիտուտի ղեկավարության հրամանով ստորաբաժանումների ղեկավարներից և այլ մասնագետներից պահանջել անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են իր պաշտոնական պարտականությունները կատարելու համար:

3.4. Ինստիտուտի ղեկավարությունից աջակցություն պահանջել իր աշխատանքային պարտականությունների և իրավունքների իրականացման համար:

4. Պատասխանատվություն

Կրտսեր գիտական աշխատողը պատասխանատվություն է կրում՝

4.1. Իր աշխատանքային պարտականությունները, նախատեսված տվյալ պաշտոնի համար և ՀՀ աշխատանքային օրենսդրության սահմաններում, ոչ պատշաճ կատարելու կամ չկատարելու համար:

4.2. Իր գործունեության ընթացքում կատարված օրինախախտումների համար, - ՀՀ վարչական, քրեական և քաղաքացիական օրենսդրության շրջանակներում:

4.3. Հասցված նյութական վնասի համար, - սահմանված ՀՀ աշխատանքային և քաղաքացիական օրենսդրությամբ: